Արձանագրություն N 2

**ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գնանշման հարցմամբ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ՀԲԱՊՁԲ-2018/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«08» «հունվար» 2018թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ — Դ. Մելիք-Նուբարյան
Հանձնաժողովի անդամներ — Մ. Հարությունյան, Ս. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար — Լ. Սարգսյան

***1. Ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

**(Դ. Մելիք-Նուբարյան)**

Ընդունել ի գիտություն, որ 04.12.2017թ. հրապարակվել են հրավեր armeps համակարգում:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության իրավաբանական և էլ. հասցեներ | Կազմակերպության ՀՎՀՀ-ն |
|---|---|---|---|
| 1 | «Ա.Կոստանյան և Ընկերներ» ՍՊԸ | ք.Երևան, Արշակունյաց 42 բն.19 hqmedsarmenia@mail.ru | 00443565 |
| 2 | «Լաեկա» ՍՊԸ | ք.Երևան,Վ.Համբարձումյան 3-18 laekatenders@gmail.com | 00058539 |
| 3 | «Գևորգ Հովհաննիսյան» ԱՁ | ք.Երևան, Ավան,Չարենց թաղ.,15շ,բն.49 armenia.cardio@gmail.com | 25348307 |
| 4 | «Ար-Մեդիկա»ՍՊԸ | ք.Երևան,Լենինգրադյան 23/11 92 տ. Armedica2010@gmail.com | 01268548 |
| 5 | «Պրոֆտեստ»ՍՊԸ | ք.Երևան,Արաբկիր41 փ. 12/3 proftestLLC@gmail.com | 00120301 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 2. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

---

(Դ. Մելիք-Նուբարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ի, որի հայտը մերժվել էր armeps համակարգի կողմից: «Մեգիէլ» ՍՊԸ-ի գրության հիման վրա բացման նիստը կասեցվեց մինչև ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը (կցվում է «Մեգիէլ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության գրությունները):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

---

(Դ. Մելիք-Նուբարյան)

Հիմք ընդունելով «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի գրությունը և ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության դիրքորոշումը (կցվում են)՝ որոշվեց «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Բացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 4. Մասնակիցների առաջարկած գների մասին

---

*(Դ.Մելիք-Նուբարյան)*

Կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելվածի:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

---

*(Դ.Մելիք-Նուբարյան)*

Հարցումներ չեն եղել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 6. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին

---

*(Դ.Մելիք-Նուբարյան)*

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 38-ի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲԱՊՁԲ-2018/12» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել և 2018 թվականի հունվարի 8-ին ժամը 14:00-ին «Լաեկա»

ՍՊԸ-ին 2, 5, 8, 10, 14, 15, 20 և 21 չափաբաժինների, «Ա. Կոստանյան և Ընկերներ» ՍՊԸ-ին 18, «Պրոֆտեստ» ՍՊԸ-ին 3, 6 և 17 չափաբաժինների, «Գևորգ Հովհաննիսյան» ԱՁ-ին 19 չափաբաժնի, «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին 9, 11, 12, 22 և 23, չափաբաժինների մասով հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի է ունեցել:

Բանակցություններին ներկա էին «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի և «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի տնօրենները: Բանակցությունների արդյունքում նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *7. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին*

---

***(Դ.Մելիք-Նուբարյան)***

«***ՀՀ ԱՆ ՀԲԱՊՁԲ-2018/12***» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել «Լաեկա» ՍՊԸ-ն 2, 5, 8, 10, 14, 15, 20 և 21 չափաբաժինների մասով, «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն 3, 6 և 17 չափաբաժինների մասով, «Գևորգ Հովհաննիսյան» ԱՁ-ն 19 և 24 չափաբաժինների մասով, «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն 9, 11,12, 22 և 23 չափաբաժինների մասով, «Ա. Կոստանյան և Ընկերներ» ՍՊԸ-ն 18 չափաբաժնի մասով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

### *8. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին*

---

***(Դ.Մելիք-Նուբարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց առաջարկել «Լաեկա» ՍՊԸ-ին, «Պրոֆտեստ» ՍՊԸ-ին, «Գևորգ Հովհաննիսյան» ԱՁ-ին, «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին և «Ա.Կոստանյան և Ընկերներ» ՍՊԸ-ին ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

***9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին***

---

***(Դ.Մելիք-Նուբարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «***ՀՀ ԱՆ ՀԲԱՊՁԲ-2018/12***» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին տեղեկատվության ստացման նպատակով.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

***10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***

---

***(Դ.Մելիք-Նուբարյան)***

«***ՀՀ ԱՆ ՀԲԱՊՁԲ-2018/12***» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում՝ փոքր դահլիճում, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ______________ | Դ. Մելիք-Նուբարյան |
| անդամներ՝ | ______________ | Մ. Հարությունյան |
| | ______________ | Ս. Հակոբյան |
| քարտուղար՝ | ______________ | Լ. Սարգսյան |

| Հ/Հ | CPV | Անվանում | Չափման միավորը | Քանակ | « Դրաֆիրմա» ՍՊԸ | «Լաքիս» ՍՊԸ | « Գեորգ Հովհաննիսյան» ԱՁ | «Ար-Մեդիկա» ՍՊԸ | «Ա. Կոստանյան և Ընկերներ» ՍՊԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | 33141211/316 | [redacted] | հատ | 500 | | | | | |
| 2 | 33141211/319 | Դեղապատ ստենտ Բ տիպի/Drug Eluted Stends (DES) type B | հատ | 500 | | 54.000.000,00 | | | |
| 3 | 33141211/322 | Դեղապատ ստենտ Գ տիպի/Drug Eluted Stends (DES) type C | հատ | 500 | 55.000.000,00 | | | | |
| 4 | 33141137/307 | [redacted] | հատ | 800 | | | | | |
| 5 | 33141137/308 | Դիլատացիոն կորոնար կաթետեր Բ տիպի/Dilatation coronar catheter type B | հատ | 800 | | 25.600.000,00 | | | |
| 6 | 33141137/309 | Դիլատացիոն կորոնար կաթետեր Գ տիպի/Dilatation coronar catheter type C | հատ | 800 | 30.400.000,00 | | | | |
| 7 | 33141136/312 | [redacted] | հատ | 1.100 | | | | | |
| 8 | 33141136/314 | Դիագնոստիկ կաթետեր Բ տիպի/Diagnsotic catheter type B | հատ | 1.100 | | 7.590.000,00 | | | |
| 9 | 33141136/317 | Դիագնոստիկ կաթետեր Գ տիպի/Diagnsotic catheter type C | հատ | 1.100 | | | | 7.568.000,00 | |
| 10 | 33141211/324 | Ինտրադյուսեր ռադիալ կամ ֆեմորալ/Intraduser radial or femoral | հատ | 1.300 | | 11.570.000,00 | | | |
| 11 | 33141211/320 | Ինտրադյուսեր հեմոստատիկ փականով/Intraduser with hemostatic | հատ | 200 | | | | 1.336.000,00 | |
| 12 | 33141136/311 | Ուղղորդիչ կորոնար կաթետեր Ա տիպի/Catheter guide A typ | հատ | 600 | | | | 14.538.000,00 | |
| 13 | 33141136/315 | [redacted] | հատ | 600 | | | | | |
| 14 | 33141136/316 | Ուղղորդիչ կորոնար կաթետեր Գ տիպի/Catheter guide C type | հատ | 600 | | 14.400.000,00 | | | |
| 15 | 33141211/318 | Ուղղորդիչ լար Ա տիպի | հատ | 600 | | 16.800.000,00 | | | |
| 16 | 33141211/323 | [redacted] | հատ | 600 | | | | | |
| 17 | 33141211/326 | Ուղղորդիչ լար Գ տիպի | հատ | 600 | 16.800.000,00 | | | | |
| 18 | 33141211/317 | Ինդեֆլյատոր-մանոմետր ներարկիչ Ա տիպի | հատ | 750 | | | | | 12.150.000,00 |
| 19 | 33141211/321 | Ինդեֆլյատոր-մանոմետր ներարկիչ Բ տիպի | հատ | 750 | | | 13.500.000,00 | | |
| 20 | 33141211/315 | Զարկերակը կարող գործիք | հատ | 120 | | 780.000,00 | | | |
| 21 | 33141136/313 | Տրոմբոասպիրացիոն կատետեր | հատ | 220 | | 22.440.000,00 | | | |
| 22 | 33141211/325 | Սպառողից ուղղորդիչ լար | հատ | 1.500 | | | | 8.295.000,00 | |
| 23 | 33141144/301 | Պունկցիոն ասեղ | հատ | 1.500 | | | | 2.130.000,00 | |
| 24 | 33141136/310 | Ռադիալ զարկերակի փակիչ | հատ | 150 | | 8.850.000,00 | 870.000,00 | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 060) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

______________N ________________

Ձեր N ______________________

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ԵՎ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13»

ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ

ՄՐՑՈՒՅԹԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Հարգելի պարոն/տիկին

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ին հասցեագրված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պարզաբանման վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ներկայացված դիրքորոշումը (գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման) բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից և «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12», «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13» ծածկագրերով հայտարարված մրցույթի շրջանակում և այսուհետ որոշումներ կայացնելիս առաջարկում եմ առաջնորդվել և հիմք ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին ներկայացրած պարզաբանմամբ:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ԷՄԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**Luiza Sargsyan**

---

| | |
|---|---|
| **From:** | Luiza Sargsyan <lsargsyan@moh.am> |
| **Sent:** | 22 декабря 2017 г. 16:42 |
| **To:** | eminavetisyan@moh.am |
| **Cc:** | davit.meliknubaryan@moh.am; medicines@moh.am; '1977poi@gmail.com'; 'm.hambardzumyan@moh.am' |
| **Attachments:** | Դիմում ֆին նախ.pdf; Grutyun_Levon.doc |

Հարգելի պրն. Ավետիսյան խնդրում եմ տալ պարզաբանում, այն մասին թե կարող է արդյոք գնահատող հանձնաժողովը «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» և «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13» ծածկագրերով հայտարարված մրցույթի շրջանակում և այսուհետ իր որոշումների կայացման ժամանակ առաջնորդվել և հիմք ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Լևոն և Լաuարա» ՄՊԸ-ին ներկայացրած պարզաբանումը (կցվում է):

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ»
ԴԵՂԱՏՈՒՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԳԵՂԱՄ ՄՈՍԻՆՅԱՆԻՆ

Ի պատասխան 08/12/.2017թ.
առցանց համար՝ 4C66-F2A2-A9DD
գրության

Հարգելի պարոն Մոսինյան

Ուսումնասիրելով Ձեր վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ


Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258

14-363

2 2017 թ

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/6-4» ծածկագրով հրատապ բաց մրցույթ

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/6-4» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և արձանագրվել է հետևյալը.

1. «Էյ-Բի-Սի ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում՝ որպես տնօրեն նշվում է Ա.Սուլաբերիձեն, սակայն փաստաթղթերը ստորագրված են Վաղարշակ Մարգարյանի էլեկտրոնային ստորագրությամբ:
2. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից Հրավերի Հավելված 2.1-ի «Տվյալներ մասնակիցների իրական շահառուների մասին» աղյուսակում լրացվել է տեղեկատվություն «Լամբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ի և «Գեդեոն Ռիխտեր» ԲԸ-ի վերաբերյալ, սակայն հրավերով պահանջվում է վերոնշյալ աղյուսակում լրացնել ֆիզիկական անձանց տվյալներ:
3. «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից Հրավերի Հավելված 10-ին կից վճարման պահանջագիրը ստորագրված չէ, ինչպես նաև չեն կցվել հրավերի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 2.1-ը, Հավելված 3-ը և Հավելված 4-ը:
4. Ա/Ձ Արտակ Բզնունու կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը ստորագրված են Ղազարյան Սևակի էլեկտրոնային ստորագրությամբ:
5. «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/6-4» ծածկագրով հրատապ բաց մրցույթի 79-րդ չափաբաժնի գծով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հավասար գնային առաջարկներ:

Հանձնաժողովը որոշեց

1.Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի պահանջները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը և ծանուցել «Էյ-Բի-Սի ֆարմացիա» ՍՊԸ-ին և Ա/Ձ Արտակ Բզնունուն՝ սահմանված ժամկետում ներկայացնել պահանջվող լիազորագիրը, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին՝ շտկված Հավելված 2.1-ը:
2. Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ 79-րդ չափաբաժնի գծով հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գնային առաջարկների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:
3 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8.2-րդ կետի պահանջները՝ մերժել «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Բանակցությունների նիստը տեղի կունենա դեկտեմբերի 11-ին, ժամը՝ 11:45, ՀՀ ԱՆ նիստերի դահլիճում

https://armeps.am/epps/cft/viewETenders.do?resourceId=2718824

*************************************************************************
ARMEPS համակարգում բոլոր գործողությունները գրանցվում են աուդիտի նկատառումներով: Սույն նամակը և կից ֆայլերը կարող են պարունակել գաղտնի տեղեկատվություն, որը պաշտպանված է օրենքով: Այն չպետք է ուղարկվի, օգտագործվի կամ կրկնօրինակվի առանց թույլտվության: Եթե Դուք սխալմամբ եք ստացել սույն նամակը, ապա խնդրում ենք այդ մասին տեղեկացնել նամակն ուղարկողին և/կամ համակարգի ադմինիստրատորին, և ջնջել նամակն ու կից ֆայլերը:

Խնդրում ենք չպատասխանել այս նամակին:
*************************************************************************

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/6-4» ծածկագրով հրատապ բաց մրցույթ

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/6-4» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և արձանագրվել է հետևյալը.

1. «Էյ-Բի-Սի ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում՝ որպես տնօրեն նշվում է Ա.Սուլաբերիձեն, սակայն փաստաթղթերը ստորագրված են Վաղարշակ Մարգարյանի էլեկտրոնային ստորագրությամբ:
2. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից Հրավերի Հավելված 2.1-ի «Տվյալներ մասնակիցների իրական շահառուների մասին» աղյուսակում լրացվել է տեղեկատվություն «Լամբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ի և «Գեդեոն Ռիխտեր» ԲԸ-ի վերաբերյալ, սակայն հրավերով պահանջվում է վերոնշյալ աղյուսակում լրացնել ֆիզիկական անձանց տվյալներ:
3. «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից Հրավերի Հավելված 10-ին կից վճարման պահանջագիրը ստորագրված չէ, ինչպես նաև չեն կցվել հրավերի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 2.1-ը, Հավելված 3-ը և Հավելված 4-ը:
4. Ա/Ձ Արտակ Բզնունու կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը ստորագրված են Ղազարյան Սևակի էլեկտրոնային ստորագրությամբ:
5. «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/6-4» ծածկագրով հրատապ բաց մրցույթի 79-րդ չափաբաժնի գծով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հավասար գնային առաջարկներ:

Հանձնաժողովը որոշեց

1.Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի պահանջները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը և ծանուցել «Էյ-Բի-Սի ֆարմացիա» ՍՊԸ-ին և Ա/Ձ Արտակ Բզնունուն՝ սահմանված ժամկետում ներկայացնել պահանջվող լիազորագիրը, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին՝ շտկված Հավելված 2.1-ը:
2. Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ 79-րդ չափաբաժնի գծով հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գնային առաջարկների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:
3 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8.2-րդ կետի պահանջները՝ մերժել «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Բանակցությունների նիստը տեղի կունենա դեկտեմբերի 11-ին, ժամը՝ 11:45, ՀՀ ԱՆ նիստերի դահլիճում

https://armeps.am/epps/cft/viewETenders.do?resourceId=2718824

*************************************************************************

All actions within the ARMEPS system are recorded for auditing purposes. This message and its attachments may contain confidential or privileged information that is protected by law; it should not be distributed, used or copied without permission. If you have received this email in error, please notify the sender and/or the system administrator, and delete this message and its attachments.

Please do not reply to this mail.
*************************************************************************

*************************************************************************

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 222, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

03/26-2/24053-17 2017-12-21

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
պարոն՝ Ս. ՓԱՐԻՋՅԱՆԻՆ
*hասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դեմիրճյան փ., 40*

*Ձեր 20.12.2017թ.*
*գրության վերաբերյալ*

Հարգելի պարոն Փարիզյան

Հայտնում ենք, որ Ձեր կողմից նշված խնդրի լուծման համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ծածկագրով ընթացակարգին «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել կազմակերպության կողմից ներկայացված հայտի ոչ լիարժեք կոդավորման բանալիով: Հայտի փաթեթավորման գործիքը մասնակցի համակարգչում հայտը փաթեթավորելիս գեներացրել է բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի դեպքում «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը ապակոդավորվել և առկա է, ուղղակի այն դատարկ է՝ այսինքն հայտի փաթեթը պատշաճ կերպով չի կազմվել և կցվել մասնակցի կողմից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատ.՝ Պետական գնումների գործընթացի
համակարգման վարչություն
Հեռ. (011) 28 93 20

MEGIEL МЕԳԻԷԼ

ՀՀ առողջապահության նախարարության

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ծածկագրով

մրցույթի հանձնաժողովին

Հանձնաժողովի·հարգելի անդամներ,

Սույնով հայտնում եմ, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ծածկագրով մրցույթի մասնակցության նպատակով հայտն էլեկտրոնային եղանակով ներկայացրել է armeps.am համակարգի միջոցով: Հայտի մուտքագրումից հետո armeps.am համակարգի ավտոմատ ծանուցմամբ ստացվել է պատասխան նամակ, որ մուտքագրումը հաջողությամբ ներբեռնվել է, եւ տրամադրել է թիվ 000052186 ստացականը:

armeps.am կայքի «հայտեր» բաժին մուտք գործելով, որը մեզ թույլ է տալիս հետեւել ընթացակարգին չի երեւում Մեգիէլ ՍՊ ընկերության ներբեռնված փաստաթղթերի zip ֆայլը (փաստաթղթերի ամբողջական ցուցակը):

Սույն խնդրի վերաբերյալ 20.12.2017թ գրությամբ իրազեկել ենք ՀՀ ֆինանսների նախարարությանը, քանի որ վերը նշված կայքի հասանելիության ապահովման վերահսկողությամբ լիազորված է այդ նախարարությունը: Դեռեւս խնդրի լուծման վերաբերյալ որեւէ ծանուցում չենք ստացել, ուստի՝ խնդրում ենք հետաձգել «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ծածկագրով մրցույթի ամփոփման գործընթացը, մինչ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կլուծվի ներկայացված խնդիրը եւ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին հասանելի կլինի «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած փաստաթղթերի ամբողջական ցուցակը, որը հնարավորություն կընձեռի հանձնաժողովին մրցույթի արդյունքների ամփոփման ժամանակ գնահատել նաեւ մեր ներկայացրած փաստաթղթերը:

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված նամակը:

Կանխավ՝ շնորհակալություն:

Հարգանքով՝

Տնօրեն Սամվել Փարիզյան

20.12.2017թ.


40 Demirchyan str.
Yerevan 0002
Republik of Armenia

Tel./Fax:(+374 10) 56 54 76
E-mail: office@megiel.am

Հայաստանի Հանրապետություն
Երևան 0002
Դեմիրճյան փ. 40

**MEGIEL** **ՄԵԳԻԷԼ**

ՀՀ ֆինանսների փոխնախարար

Կարեն Թամազյանին

Հարգարժան պարոն փոխնախարար,

«Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/12» ծածկագրով եւ ՀՀ ՊՆ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով մրցույթներին մասնակցության նպատակով հայտերը էլեկտրոնային եղանակով ներկայացրել է armeps.am կայքի միջոցով: Հայտերի մուտքագրումից հետո համակարգի կողմից ստացվել է պատասխան նամակ, որ մուտքագրումը հաջողությամբ ներբեռնվել է, եւ տրվել են համապատասխան թիվ 000052186 և 000052243 ստացականներ:

Նիստերի բացման օրը armeps.am կայքը տալիս է հնարավորություն նիստերի բացումից հետո դիտել մասնակիցների առաջարկները ZIP ֆայլի տեսքով:

Վերը նշված ՄՀ-ի ծածկագրերում «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը կողմից ներկայացրած հրավերների ZIP ֆայլերը armeps.am կայքի խափանման հետեւանքով չեն երևում կամ երևում են մասնակիորեն:

Սույն խնդրի մասին հեռախոսային կապի միջոցով հայտնել ենք առողջապահության նախարարությանը եւ ֆինանսների նախարարության համապատասխան բաժիններին, սակայն խնդրի լուծման վերաբերյալ հստակ գործողություններ չեն կատարվել:

Առաջացած խնդրի վերաբերյալ տեղեկացրել ենք նաեւ secretariat@minfin.am էլեկտրոնային հասցեով:

Ներկայացված խնդրի լուծման նպատակով խնդրում եմ Ձեր աջակցությունը:

Հարգանքով՝

Տնօրեն Սամվել Փարիզյան

20.12.2017թ.

40 Demirchyan str.
Yerevan 0002
Republik of Armenia

Tel./Fax:(+374 10) 56 54 76

E-mail: office@megiel.am

Հայաստանի Հանրապետություն
Երևան 0002
Դեմիրճյան փ. 40